ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2019թ. հոկտեմբերի 25 N 135

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՓԱՐՊԻԻ Ղ.ՓԱՐՊԵՑՈՒ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՈՐԻԿ ԱՐՇԱԿՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Նորիկ Արշակյանի՝ 23.10.2019թ. ներկայացրած գրավոր բացատրությունն առ այն, որ իր գործունեության արդյունքում պետությանը հասցվել է առնվազն չորս միլիոն վեց հարյուր հազար ՀՀ դրամի վնաս, որը գերազանցում է պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի հինգ տոկոսը, ինչը սահմանված է <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի <<է>> կետով,

հիմք ընդունելով այն հանգամանքը, որ աշխատողը դրամական կամ ապրանքային արժեքներ սպասարկելիս կատարել է այնպիսի արարք, որի հետեւանքով գործատուն կրել է նյութական վնաս, որի արդյունքում գործատուն կորցրել է աշխատողի նկատմամբ վստահությունը, ինչը սահմանված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին կետով,

ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 122-րդ հոդվածի 1-ին կետով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 123, 220, 222, 224, 226 եւ 227-րդ հոդվածների պահանջներով, ինչպես նաեւ <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի <<ա>> կետով եւ 16-րդ հոդվածի 3-րդ մասի <<է>> կետով՝ *կարգադրում եմ.*

2019 թվականի հոկտեմբերի 25-ից Նորիկ Արշակյանին ազատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Փարպիի Ղ.Փարպեցու անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով 2016 թվականի դեկտեմբերի 28-ին նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ.ԳԵՎՈՐԳՅԱՆ